ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Մասնագիտություն – Պատմություն

Կուրս/կիսամյակ – I/II

ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ	6 / 180
ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ	80
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	40
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ	-
ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ	40
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ	-
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ	-
ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ	2

1. Քարեդարյան Հունաստանը: Բրոնզեդարյան մշակույթները
2. Աքայական Հունաստան: Դորիական ներխուժումը
3. Սպարտան և Աթենական պետությունը Ք.ա. XI-VII դդ
4. Հին Հունական գաղութացումը
5. Աթենական ժողովրդավարությունը Ք.ա. VI-V դդ.
6. Հույն-Պարսկական պատերազմը
7. Հին Հունաստանը Ք.ա. V-IV դդ.
8. Մակեդոնիայի Հզորացումը
9. Մակեդոնացու արևելյան արշավանքը
10. Հելլենիստական Հունաստանը: Նվաճումը Հռոմի կողմից
11. Հին Հռոմը թագավորական ժամանակաշրջանում

Դասախոսություն 1

Թեմա 1. Քարեդարյան Հունաստանը: Բրոնզեդարյան մշակույթները

Հին Հունաստանը բնակեցված է եղել մարդու կողմից դեռևս վաղնջական ժամանակներում: Քաղկիդիկե թերակղզում հայտնաբերվել են (Պետրալոնե քարանձավ) արքատրոպի բրածո մնացորդներ, որոնք թվարկվում են Ք.ա. 300 հազար տարով: Միջին քարեդարյան ուշագրավ բնակավայր է Փրանաքթին, որտեղ մարդիկ բնակվել են Ք.ա. 30հազարա տարի առաջ: Փրանքթին եզակի է նրանով, որ մարդն այստեղ ապրել է մինչև Ք.ա. 3000թ. անընդհատ: Փրանքթիի բնակիչները կապեր ունեին, Էգեյան ծովի կղզիներում բնակվողների հետ: Պելոպոնեսում գտնվող այդ քարանձավում հայտնաբերվել են անգամ փոքրասիական ծագուն ունեցող բուսատեսակների մնացորդներ: Նոր քարե դարյան ժամանակաշրջանում մայրցամաքային Հունաստանի բնակիչները հաղորդակցվել են անատոլիական (Փոքր Ասիա) մշակույթի կրողների հետ: Այստեղ է պեղվել Եվրոպայի հնագույն նեոլիթյան բնակավայրը՝ Նեա Նիկոմեդիան (Ք.ա. VII հազարամյակ), որ գտնվում է Մակեդոնիայում: Բնակիչների հիմնական զբաղմունքը երկրագործությունը և անասնապահությունն էր: Առկա են ուղղանկյուն արհեստական կացարաններ, ինչը վկայում է նստակեցության մասին: Հայտնաբերվել է խեցեղեն և կանացի արձանիկներ: Սերտ աղերսներ կան անատոլիական Հաջիլար և մերձավորարևելյան Հասսունա բնակավայրերի հետ: Նեոլիթյան մշակույթը առկա է ինչպես Փրանքթիում, այնպես էլ Սեսկլոյում: Սա Թեսալիայում գտնվող բնակավայր էր, որը թվարգվում է Ք.ա. VII հազարամյակով: Պեղվել են Մեգարոն կոչվող ուղղանկյուն կացարաններ, որոնց կենտրոնում օջախն է: Սեսկլոյում բնակվել է մոտ 3 հազար բնակիչ, ինչն էլ հիմք է տալիս այն նախաքաղաք համարել: Բնակիչները հողագործներ և անասնապահներ էին: Առկա էր Մայր-Աստվածուհու պաշտամունքը: Ք.ա. 5000թ. մոտերքը Սեսկլոն կործանվել է մեկ այլ նեոլիթյան մշակույթի՝ Դիմինիի բնակիչների կողմից: Դիմինին կառուցված է բլրի վրա, առկա է միջնաբերդ՝ ակրոպոլիսը: Սերտ աղերսներ կան բալկանյան Վինչա մշակույթի հետ: Նեոլիթյան են նաև Դիսպիոն (Մակեդոնիա), Լեռնան (Արգոս): Ենթարկվում էր, որ Նեա նիկոմեդիայի և Դիմինիի բնակիչները եկվորներ են Արևմտյան Անատոլիայից: Անցումային շրջանի բնակավայր է Հարիսսան (Թեսալիա): Պղնձեքարեդարյան մշակույթը Հին Հունաստանում ներկայացված են Միլոս կղզա Փիլակոպի բնակավայրով, որը

վանակատի (Օբսիդիան) արդյունահանման խոշոր կենտրոն էր (Ք.ա VI-V հազարամայակներ) և Սալիագոս բնակավայրը նույն կղզում:

Վաղ բրոնզե դարից սկսած (Ք.ա. IV-III հազ.) Բալկաններում ձևավորվում են մի շարք քաղաքկրթություններ, որոնցից հայտնի են Էգեյանը և Կիկլադյանը: Էգեյանի մեջ որպես փուլեր առանձնացնում են Կրետո-Միկենյան ժամանակաշրջանը (Ք.ա. III-II հազ.): Այս փուլը ներառում է հետևյալ քաղաքակրթությունները՝ Մինոսյան (կամ կրետեկան), որը ընդգրկում է Ք.ա. III հազ. մինչև Ք.ա. XII դարն ընկած ժամանակահատվածը, էլլադական, որը տևում է Ք.ա. III հազ. մինչև Ք.ա. XII դարը: Հարակից է և համաժամանակյա կիկլադյան քաղաքականությունը, որը ևս տևում է Ք.ա. III հազ. մինչև Ք.ա. II հազ. վերջը և ընդգրկում է Կիկլադյան կղզախմբի մեջ մտնող կղզիների մշակույթները:

1) Վաղ մինոսյան շրջան (Ք.ա. 3000թ. մինչև Ք.ա. 2000թ.)
2) Միջին մինոսյան շրջան (Ք.ա. 2000թ. մինչև Ք.ա. 1450թ.)
3) Ուշ մինոսյան շրջան (Ք.ա 1450թ. մինչև Ք.ա. 1100թ.)

Էլլադական քաղաքակրթության մեջ առանձնացնում են վաղ էլլադական շրջանը (Ք.ա. 3000թ. մինչև Ք.ա. 2000թ.) միջին էլլադական շրջանը (Ք.ա. 2000թ. մինչև 1600թ.) և ուշ էլլադական շրջանը (Ք.ա. 1600թ. մինչև Ք.ա. 1700 թ.): Ուշ էլլադական շրջանը նաև անվանում են միկենյան քաղաքակրթություն կամ սքայական քաղաքակրթություն: Այն ընդգրկում էր մայրցամաքային Հունաստանը:

Կիկլադյան քաղաքակրթությունը ներկայացված է բրոնզեդարյան այնպիսի բնակավայրով, ինչպիսիս են Կաստրին (Սիրոս կղզին), Պոլիոքնեն (Լեմնոս), Փիլակոպեն (Միլոս), Ակրոտիրին (Թիրա), Այս Իրինիան (Քեոս): Հայտնի արգասիքներ էին «կիկլադյան կուռքերը»՝ հոյակապ մշակված արձանիկները և պաշտամունքային «թավաները»: Թաղումները կատարվում էին քիստա կոչված քարե արկղ-դամբարաններում: Կտրուկ առանձնացնում է Լեռնա բնակավայրը Արգոսում, որտեղ պեղված է երկհարկանի պալատ (Ք.ա. 2500թ.) և որի բնակիչները հնդեվրոպացիներ են: Հստակեցված է պելասգների (փղշտացիներ), լելեգների և կսրիսցիների առկայությունը:

Թեմա 2. Աքայական Հունաստան: Դորիական ներխուժումը

Հին Հունաստանի պատմության հնագույն շրջանում կարևոր դեր են խաղացել հնդեվրոպական ցեղախումբերը, որոնք զանգվածայնաբար ներխուժել են Բալկաններ և իրենց զգալի ազդեցությունը թողել հույն ժողովրդի ձևավորման վրա: Ժամանակային առումով առաջինը Հունաստանում հայտնվբել են աքայացիները (Ք.ա. III հազարամյակի վերջին), որոնք սկզբում հաստատվեցին Էպիրոսում և Թեսալիայում, ապա իջան հարավ և հաստատվեցին Պելոպենեսում: Նրանք մասամբ ոչնչացրեցին ոչ հնդեվրոպացի տեղաբնիկներին, սրանց մի մասը հեռացավ երկրից: Հարաբերվելով զարգացած մինոսյան քաղաքակրթության հետ և զգալի փոխառություններ կատարելով նրանից տոհմացեղային մակարդակի վրա գտնվող աքայացիները անցում կատարեցեին դեպի պետականություն և սոցիալ-քաղաքական շերտավորում: Պեղվել են բազմաթիվ աքայական բնակավայրեր, որոնք մեծ մասամբ պատճենահանում էին կրետական բնակավայրերը՝ կենտրոնում կառավարչի՝ բասիլևսի պալատն էր կիկլոսյան ամրոցի տեսքով, իսկ նրա շուրջը բնակիչների հյուղակներ էին:

Հայտնի են Միկենեն և Տիրինթոսը Արգոսում, Փիլոսը՝ Մեսենիայում, Յոլքոսը՝ Թեսալիայում, Թեբեն և Օրքոմենեն՝ Բեովթիայում և Աթենքը՝ Ստտիկայում: Ժամանակի ընթացքում աքայացիները գրավեցին Էգեյան ծովի կղզիները և սկսեցին առնչվել էսեթական տերության հետ: Խեթական արձանագրություններում հիշատակվում է արևմուտքում գտնվող Աքիյավա երկրի մասին: Աքայական կամ միկենյան հասարակության գոյության հիմքում ոչ թե գյուղատնտեսությունն էր, այլ թալանչիական արշավանքները՝ պատերազմը: Պեղված աքայական առաջնորդների գմբեթարդ դամբարաններում՝ թոլոսներում, հայտնաբերվել են ավարի արգասիքներ ոսկու և այլ թանկարժեք մետաղների տեսքով: Ակսվել էր սոցիալական շերտավորումը: Հայտնի էր տոհմային ավագանին՝ պոլիկղերոսներ, որոնք արդեն տիրապետում էին զգալի ունեցվածքի և նրանց կողքին արդեն՝ ազատ հողատեր համարականների կողքին, հայտնավել էին հողազուրկ ակղերոսներ: Բասիլևսի հետ տոհմը կառավարում էր Ավագների խորհուրդը՝ Բուլեն, որին աջակցում էր ժողովրդական ժողովը՝ ագորան: Շնորհիվ հունական էպոսի՝ Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսականի», հայտնի է դարձել սքայական ցեղերի միացյալ արշավանքը փոքր Ասիա և պատերազմը Տրոյս պետության դեմ (Ք.ա. 1198-1188թթ.): Մինչև այդ աքայացիները՝ օգտվելով կրետական տերության

աղետալի կործանումից, Ք.ա. XIV դարում գրավել էին Կրետեն և հաստատել կրետե-Միկենյան պետություն: Ք.ա. XIV-XIIIդդ. Բալկաններ ներխուժեցին նոր հնդեվրոպական ցեղեր՝ Դորիացիները: Սրանք տիրապետում էին երկաթի մշակման և դրա շնորհիվ կարողացան նախ հաստատվել Էպիրոսում, ապա Ք.ա. XII դարում ներխուժեցին կենտրոնական Հունաստան ևր նվաճեցին Ատտիկան: Աքայացիների զգալի մասը հեռացավ երկրից, մնացածները հպատակեցվեցին: Դորիացիները իջան Պելոպոնես և գրավեցին Լակոնիան (Սպարտա): Աքայական ցեղերի գերակայությունը պահպանվեց Աքայայում և Արգոսում: Սկսվում է հույն ժողովրդի էթնոգենեզը, որին ակտիվ մասնակցել են Աքայացիները, դորիացիները, Փոքր Ասիայում հաստատված հոնիացիները և էոլացիները: Ք.ա. XI դարից սկսվում տոհմային հասարակության քայքայումը: Մինչև Ք.ա. IX դարը ընկած ժամանակը Հունաստանում Ք.ա. IX դարի կեսերից սկսվում է վերելք, աշխուժանում է առևտրատնտեսական կյանքը: Քաղաքը գտնվում էր հարևան գյուղական բնակավայրերի հետ համակեցության մեջ՝ սինոյկիա և դա ավելի է կայունացնում նրա գոյությունը: Առաջին քաղաք-պոլիս համարվում էր Աթենքը: Պոլիսն ուներ սոցիալական դասային կառուցվածք (եռադաս): Իշխող կամ կառավարող դասը եվպատրիդներն էին՝ մասնավոր հողատեր ազնվականությունը, երկրորդ դասը՝ գեոմորոսներն էին, երրորդ դասը՝ դեմիուրգներն էին՝ արհեստավորները և վաճառականները: Ք.ա. 850-650 թթ. ընդունված է անվանել արիստոկրատիայի (ազնվաիշխանություն ժամանակաշրջան): Սոցիալական բևեռացման պատճառով շուտով սկսում են սրվել արիստոկրատիայի (հիպատրիդներ) և դեմոս (II և III դասեր) միջև հարաբերությունները: Ք.ա. VII դարի կեսից առաջանում են քաղաքացիական բախումներ և հուզումներ:

Դասախոսություն 3

Թեմա 3. Սպարտան և Աթենական պետությունը Ք.ա. XI-VII դդ

Ք.ա. X դարում, Պելոպոնեսի հարավում, դորիացիները ձևավորվեցին Սպարտա կամ Լակոնիկե պետությունը: Այն ուներ յուրահատուկ սոցիալ-քաղաքական կառուցվածք և առաջանում էր մյուս հունական պետություններից ունեցվածքային և իրավական, ինչպես նաև գենդերային հավասարության առկայությամբ, ռազմական բարձր պատրաստա-կամությամբ: Սպարտական պետականության հիմքում ընկած էին Ք.ա. IX դարի գործիչ օրենսդիր Լիկուրգոսի օրենքները («Հոետրան»), որոնք սահմանում էին ինչպես պետական կառավարման ձևը, այնպես էլ սոցիալական կառուցվածքը: Բնակչությունը բաժանվում է 3 դասերի: Առաջին կամ իշխող դասը սպարտացիներն էին (դորիացիների հետնորդները) մոտավորապես 9 հազար ընտանիքից բաղկացած նրանք բնակվում էին Սպարտա բնակավայրում, սակավ երկրի մնացած մասերում տնօրինում էին հավասարաչափ (մոտ 20 հա) հողաբաժինների: Սպարտացիներին արգելված էր ինչպես գյուղատնտեսությամբ, այնպես էլ արհեստներով և առևտրով զբաղվելը: Դրանցով զբաղվում էին հպատակեցված մյուս երկու դասերը:

Պերիեկները (մոտ 30 հազար) զբաղվում էին արհեստներով և առևտրով, ինչպես նաև ծովագնացությամբ, անձնապես ազատ էին, սակայն զրկված էին քաղաքական իրավունքերից: Պատերազմի ժամանակ նրանք կարող էին ծառայել միայն օժանդակ զորամասերում բնակվում էին հիմնականում ծովափնյա բնակավայրերում: Գյուղերում բնակվում և սպարտացի հողատերերի հողերը մշակում էին հելոտները, որոնք համարվում էին Սպարտա պետություն կոլեկտիվ սեփականությունը: Կարգավիճակով ավելի շատ մոտ էին ոչ թե ստրուկներին, այլ ճորտերին, քանի որ ունեին որոշակի սեփականություն և տնօրինում էին ստացված բերքի կեսը: Նրանք լրիվ իրացազուրկ էին: Ավելին, տարեկան մեկ անգամ սպարտական պետությունը պատերազմ էր հայտարարում հելոտներին (կրիպտիա) և առավել ըմբոստները ոչնչացվում էին: Սպարտացի տղամարդկանց զբաղմունքը համատեղ զորավարժությունները և համատեղ ճաշկերույթներն ոին նպատակը կոլեկտիվ ոգի դաստիարակելն էր, որն անհրաժեշտ էր մարտի դաշտում: Կանայք ևս ակտիվորեն մասնակցում էին երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Ունեցվածքային հավասարություն սահմանելով, հիկուրգոսը ներքին կայունություն և ներդաշնակություն էր ձևավորել սպարտակ հասարակության ներսում, ինչը ձևավորվել էր իրական և ոչ թե ձևական իրավահավասարություն:

Պետության գլուխ կանգնած էին 2 արքաները, որոնք խաղաղ ժամանակ գերագույն քրմերի և դատավորների գործառույթներ էին իրականացնում, իսկ պատերազմի ժամանակ զորքի հրամանատարներն էին: Նրանցից ավելի բարձր կանգնած է էփորոսները, որոնք կարող էին նույնիսկ մահապատժի ենթարկել արքաներին: Օրենսդիր իշխանությունը բաժանված էր վերին պալատի՝ հերուսիայի և ստորին պալատի՝ ապելլայի (ժողովրդական ժողով), որի անդամ կարող էին լինել 30 տարին լրացած սպարտացիները: Ք.ա. VIII-VIIդդ. Սպարտան զգալի ընդլայնեց իր տարածքը նվաճելով հարևան Մեսենիան: Ք.ա. 530թ. ձևավավորեց Պելոպոնեսյան Դաշինքը: Աթենական պետության հիմնադիր համարվում է Թեսևսը (Ք.ա. XIII դար), որը սահմանեց քաղաք-պետության կառուցվածը որպես համակեցություն (սինոյկիա): Աթենական հասարակությունը եռադաս էր: Իշխող դասը՝ եվպատրիդները ձևավորվում էին 9 կառավարողների՝ արքոնտոսների համակարգը: Գործադիր բարձրագույն պաշտոնյա I արքոնտոս էպոնիմոսն էր, որը տնօրինում էր նաև պետական գանձարանը: II արքոնտոս բասիլևսն էր, որն իրականացնում էր քրմապետի գործառույթներ, III արքոնտոսը պոլեմարքոսն էր՝ զորքի հրամատարը: Մնացած 6 արքոնտոսները՝ թեսմոթետոսները դատավորներ էին: Սրանց կից գործում էր ավագների խորհուրդը՝ արեոպագոսը, որը կազմված էր պաշտոնաթող արքոնտոսներից և իրականացնում էր օրենսդիր վերին պալատի գործառույթներ: Ք.ա. VII դարի վերջից օրենսդիր ստորին պալատի դերը ստանձնեց ժողովրդական ժողովը՝ էկլեսիան: Ք.ա. VII դարում սրվեց պայքարը աթենական արիստոկրատիայի և դեմոսի միջև: Ք.ա. 630թ. ոմն Քիլոն փորձ կատարեց Աթենքում անձնական բռնապետություն՝ տիրանիա հաստատել, սակայն ձախողվեց: Այնուհանդերձ, դեմոսին հաջողվեց Ք.ա. 621թ. արիստոկրատայի կամայականության թուլացմանն ուղղված մի լուրջ բարեփոխում իրականացնել: Գրի առնվեցին սովորույթային իրավունքի նորմերը (Դրակոնտոսի օրենսգիրք): Սակայն սոցիալական լարվածությունը չէր թուլանում և Աթենքը կանգնած էր քաղաքացիական պատերազմի եզրին:

Թեմա 4. Հին Հունական գաղութացումը

Հին հունական գաղութացումը սկսվել է Ք.ա. IX դարում և շարունակվել մինչև Ք.ա.V դարը: Այն ուներ հստակ տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային պատճառները:

Տնտեսական պատճառները - Արհեստների և առևտրի զարգացումը, դրանց թռիչքաձև աճը: Հումքի և իրացման նոր, արտաքին շուկաների ձեռք բերման անհրաժեշտությունը: Հացի սղությունը, դրա ներկրման ծավալների մեծացումը:

Սոցիալական պատճառները - Հողի (համայնքապատկան) զավթումը արիստոկրատիայի կոմից, հողազուրկների թվի ավելացումը, արտերկրից ստրուկների ձեռքբերումը:

Քաղաքական պատճառները – Սկսված պայքարը արիստոկրացիայի և դեմոսի միջև հանուն քաղաքական իշխանության, պարտվածների արտագաղթը, թիմոկրատիայի հաստատումը: Մշակութային պատճառներ «Բարբարոսական օյկումենի» մշակութային յուրացումը Աշխարհաճանաչողական հաղորդակցման ծավալումը:

Ընդունված է հունական գաղութացման մեջ առանձնացնել հետևյալ փուլերը.

1. Արևմտյան (դեպի Միջերկրական ծովի արևմուտք) փուլ – Ք.ա. IXդ. –Ք.ա. VII դար:
2. Հարավային (դեպի Աֆրիկայի հյուսիսային մաս) փուլ –Ք.ա. IX դ. – Ք.ա.VI դար:
3. Արևելյան (դեպի Սև ծովի ափամերձ շրջաններ) փուլ-Ք.ա. VI դ-Ք.ա. V դար:

Արևմտյան փուլը սկզբնավորվեց Ք.ա. IX դարի վերջին: Էվբեյաը կղզու Քաղկիս քաղաքի բնակիչները Ապենինյան թերակղզու արևմուտքում: Պիտեկուսա կղզու հիմնեցին գաղութ, ապա քիչ անց հիմնեցին Կումե և Նեապոլիս գաղութները:

Գաղութացման երկու մեխանիզմ կար: Դրանց մեծ մասի ստեղծումը կրում էր կազմակերպված բնույթ: Որևէ հունական քաղաք-պոլիս, ջանալով լիցքաթափել առկա սոցիալ-քաղաքական լարվածությունը և ազատվել աշխատուժի ավելցուկից հատուկ պաշտոնյայի՝ օյկիստի գլխավորությամբ ընտրում էր բնակության համար պիտանի նոր վայր և կազմակերպում էր գաղութաբնակների տեղափոխումը և հաստատումը: Հիմնադիր պոլիսը կոչվում էր «Մետրոպոլիա», իսկ հիմնված գաղութը՝ ապոյկիա: Առավել հայտնի մետրոպոլիսներն էին Մեգարան, Միլեթը, Կորնթոսը և Փոկեան Արևմտյան գաղութացման արդյունքում յուրացվեց Իտալիայի կենտրոնը և հարավը: Սիցիլիա կղզին և Ֆրանսիայի

հարավը: Սակայն դա հարուցեց էտրուսկների և կարթագենացիների դժգոհությունը և նրանք Ք.ա. 535թ. Կորսիկայի մոտ ծովային ճակատամարտում պարտության մատնեցին հույներին և կասեցրին նրանց հետագա առաջխաղացումը: Արևմուտքում ձևավորված հունական գաղութների համակարգը կոչվեց «Մեծ Հունաստան» Հարավային գաղութացման արդյունքում, ներկայիս Լիբիայի տարածքում հիմնվեց կիրենսա գաղութը, իսկ նեղոսի դելտայում՝ նավկրատիս գաղութը: Անհամեմատ մեծ ծավալներ ստացավ արևելյան (հյուսի-արևելյան կամ սև ծովյան) գաղութացումը նախ գաղութներ հիմնվեցին Թրակիայում (Փոթիդեյա, Ամփիպոլիս, Մարոնեյա): Ապա Սև ծովի հարավային ափին հիմնվեցին Սինոպա, Տրապեսունտ, Կերասունը և Հերակլեյա գաղութները: Սև ծովի արևմտյան ափին հիմնվեցին Իստրիա, Թոմե և Ապոլլոնիա գաղութները: Հյուսիսային ծովափին (ներկայիս Ուկրանայի տարածքը) հիմնվեցին Օլվիան, Թիրան և Օդեսսոը: Դոն գետի ափին հիմնվեց ամենահյուսիսային գաղութը՝ Տանաիսը: Սև ծովի արևելյան ափին հիմնվեցին Պիտիունտը, Դիոսկուրիան և Փասիսը:

Հին հունական գաղութացումը լուծեց նորաստեղծ գաղութներից բուն Հունաստան հացի, ձկան, անասունների, մեղրի և աղի ներկրման հիմնախնդիրը: Ներկրվում էին զգալի թվով ստրուկներ: Գաղութներ արտահանում էին գինի, ձիթապտուղ և թուզ նաև արհեստագործական արտադրանք: Աշխույժ տարանցիկ առևտուրը նպաստեց Հունաստանի տնտեսական և մշակութային զարգացմանը: Մեծացավ Եվրոպայի հարավում և արևելքում հունական ազդեցությունը, զարգացան ապրանքադրամային հարաբերությունները: Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին գիտության և արվեստի զարգացման համար: Ձևավորվեց հունական Սփյուռքը՝ Դիասպորան:

Դասախոսություն 5

Թեմա 5. Աթենական ժողովրդավարությունը Ք.ա. VI-V դդ.

Արիստոկրատիայից դեմոկրատիայի (ժողովրդավարություն) անցման գործընթացի սկիզբը Արևելքում դրվեց Ք.ա. VI դարի սկզբին, Սոլոնի բարենորոգումներով: Համարյա անարյուն և խաղաղ ճանապարհով Սոլոնը ձեռնամուխ եղավ տոհմային ազնվականության իշխանության տնտեսական սոցիալական և քաղաքական հիմքերի թուլացմանը և դեմոսի դիրքերի ուժեղացմանը:

Նախ արիստոկրատիայի ձեռքից վերցվեց ազդեցության այնպիսի մի հզոր լծակ, ինչպիսին էր պարտքային ստրկությունը: Ք.ա. 594թ. Սոլոնը հայտարարեց պարտքերի լուծարման (սեյսաքթիս) և ստրկությունից աթենացի պարտապանների փրկագնման մասին աթենական գանձարանի միջոցների հաշվին: Դա ստրկացվածների անձերի ազատագրումն էր և ամոթալի այդ երևույթի վերացումը: Պարտքային բեռի թեթևացմանն էր ուղղված դրամական բարեփոխումը: Հին 73 դրահմի փոխարեն այժմ սահմանվում էր 100 նոր դրահմ (28%-ով կրճատում): Հաջորդ քայլով արիստոկրատներից վերցվեց ֆինանսա-տնտեսական ոչ պակաս մի լծակ, որն էլ անզավակ աթենացիների ունեցվածքի տնօրինումը հոգուտ տոհմիկ ավագանու: Թույլատրվում էր այդ ունեցվածքի օտարումը և վաճառքը: Տնտեսական մյուս բարեփոխումներն ուղղված էին արհեստների և առևտրի զարգացմանը: Արգելվեց հացահատիկի արտահանումը և քաջալերվեց գինու և ձիթայուղի արտահանումը: Մտցվեցին խնայողությանը և համեստ կենցաղավարմանն ուղղված օրենքները: Դրանց հաջորդ քաղաքական բարեփոխումները: Պետության և հասարակության մեջ ըստ տոհմային ծագման դիրք կամ պաշտոն զբաղեցնելու նախապայմանը փոխարինվում էր ըստ ունեցվածքի նախապայմանով (թիմոկրատիա կամ պլուտոկրատիա): Այսուհետև, որևէ աթենացի որևէ պաշտոն կարող էր զբաղեցնել ըստ իր ունեցվածքի չափի: Ըստ այդմ, աթենացիները բաժանվեցին 4 խմբերի: Առաջին խմբի մեջ մտան ամենաունևորները՝ պենտակոսիոմեդիմները (500 մեդիմներ ունեցողները): Մեկ մեդիմը հավասար է 52 լիտրի (1 տակառ): Միայն նրանք կարող էին զբաղեցնել արեոպագոսում: Երկրորդ խմբի (դասի) մեջ մտան 300-ից 500 մեդիմն ունեցողները (հիպպոսներ կամ հեծյալներ): Նրանք կարող էին զբաղեցնել վերակացուների կամ օրինապահների պաշտոնները: Երրորդ դասի (200-ից 300 մեդիմն) քաղաքացիները՝ զևգիտեսները (լծկալներ) կարող էին դառնալ «400»-ի: Խորհրդի անդամ (բուլե) կամ

զբաղեցնել տվյալ ատենակալի (դատավորի) պաշտոն: Չորրորդը, առավել չունևոր դասի ներկայացուցիչները՝ թետոսները իրավունք ունեին մասնակցել ժողովրդական ժողովի նիստերին (էկլեսիա), սակայն միայն քվեարկելու և ընտրվելու, բայց ոչ ընտրվելու իրավունքով: Դրանք թետոսներն էին: Այսպիսով, հայտնվեցին կոլեգիալ կառավարման նոր մարմինների հանձր. «400»-ի: Խորհրդի էկլեսիայի և դիկաստերիայի (երդվյալների դատարան): Սա դեպի ժողովրդավարություն տանող առաջին, բայց և բավականին լուրջ քայլ էր: որքան էլ տարօրինակ թվա, բայց դեմոկրատիայի խորացմանը նպաստող հաջորդ գործիչը Աթենքի տիրան (այսինքն բոնապետ) Պիսիստրատեսն էր (Ք.ա. 560-552թթ.): Նա շարունակեց արիստոկրատիայի դիրքերի թուլացումը: Բազմաթիվ արիստոկրատներ պարզապես արտաքսվեցին, իսկ նրանց ունեցվածքը բռնազավթվեց և բաժանվեց դեմոսին: Ամրացվեց միջին ունևոր խավը՝ ազատ գյուղացիությունը, որոնց բացի հողերի շնորհումից, տրվեցին արտոնյալ վարկեր և փոխառություններ: Մտցվեց հօգուտ դեմոսի, շրջիկ դատավորների համակատարը:

Խթանվում էր արտաքին առևտուրը և արհեստները: Ծավալվեց վիթխարի քաղաքաշինություն, համարյա վերացվեց գործազրկությունը: Ստեղվեցին անվճար հանրային գրադարան և թատրոն չունևոր խավի համար: Դեմոսի համար նոր տոներ սահմանվեցին: Վերջապես, իրական դեմոկրատիայի հաստատումը ավարտին մոտեցրեց Քլիսթենեսը (Ք.ա. 506թ.), որն իր բարեփոխումներով էականորեն խարխլեց արիստոկրատիայի հիմքերը: Նախ վառատարածքային առումով Ատտիկան բաժանվեց ինքնակառավարվող միավորներ՝ դեմերի, որոնք ունեին իրենց ընտրովի ղեկավարը և հրավիրում էին ժողովներ: 4 արիստոկրատական ֆիլմերը վերացվեցին: Ստեղծվեցին 10 նոր ֆիլմեր, որտող բնակչությունը խառնված էր արիստոկրատիայի ազդեցության թուլացման համար: «400»-ի խորհրդի փոխարեն ստեղծվեց «500»-ի խորհուրդ: Աթենքի իսկական ղեկավար դարձավ էկլեսիան: Առաջին արքոնտոսի փոխարեն մտցվեց 100 գանձապահների և պոլեմարքոսի փոխարեն 10 ստրատեգոսների համակարգ: Դեմոկրատիան թշնամիներից պաշտպանելու նպատակով մտցվեց օստրակիզմը՝ քաղաքական բարեխոսության և վստահության պարբերական ստուգումը:

Թեմա 6. Հույն-Պարսկական պատերազմը

Հույն-պարսկական պատերազմի գլխավոր պատճառը Աքեմենյան Պարսկաստանի ծավալապաշտական ընդլայնում էր դեպիի Եվրոպա, նրա՝ Հունաստանը նվաճելու ձգտումը:

Իշխող պարսկական վերնախավի այդ զավթողական նկրտումները հրավիրվում էին ինչպես Հոնիայի առևտրա-ստրկատիրական շրջանների, այնպես էլ փյունիկացիների կողմից: Պարսիկները նաև դաշինք էին կնքել Կարթագենի հետ: Արդեն Ք.ա. 513թ. Դարեհ I սկյութական արշավանքի ժամանակ նվաճել տվեց Սև ծովյան նեղուցները և վերահսկողություն հաստատեց Հունաստան ներմուծվող հացի վրա: Պարսկական տիրապետության տակ ընկան նաև Հունաստանի սահմանակից Թրակիան, Բյուզանդիոնը և Քաղկեդոնը: Ք.ա. 500թ. դրությամբ նվաճավել էին նաև Էգեյան ծովի մի շարք կղզիներ: Բուն Հունաստանի նվաճման համար գալիք պատերազմի համար որպես հարմար առիթ հանդիսացավ Ք.ա. 499թ. պարսիկների դեմ Հոնիայում սկսված ապստամբությունը: Պատրվակ բռնելով այն իրողությունը, որ Աթենքը և Էվբեյա ռազմական օգնություն ցուցաբերեցին ապստամբներին, Դարեհ I նրանց պատժելու նպատակով էլ Ք.ա. 494թ. արյան մեջ խեղդելով հոնիացիների զինված պայքարը,: Նա 492թ. կարգադրեց իր զորավար Մարդոնիոսին մոտ 30հազ. զորքով պատժիչ արշավանք սկսել Աթենքի և Էվբեյայի դեմ: Սակայն զորքը նավաբեկության ենթարկվեց Սթոն հրվանդանի մոտ և արշավանքը ձախողվեց: Դարեհ I հնազանդության պահանջով դեսպաններ ուղարկեց բոլոր հունական պետություններ, որոնց մեծ մասը՝ Թեսալիան, Բեովթիան, Էգինան, Արգոսը և մյուսները, հպատակություն հայտնեցին և ճանաչեցին Պարսկաստանի գերակայությունը: Միայն Աթենքում և Սպարտայում դեսպանները կտրուկ մերժման արժանացան: Աթենացիները սկսեցին պատրաստվել հզոր հակառակորդի դեմ պատերազմի: Բուն Աթենքում հստակվեցին երկու խմբավորումներ, որոնք պարսիկների դեմ պայքարի 2 տարբերակ մարտավարություններ էին առաջարկում: Մեկը ծովային խմբավորումներ էր Թեմիստոկլեսի գլխավորությամբ, որը ագրեսիվ հարձակողական ռազմավարության կողմնակից էր և կոչ էր անում նախահարձակ լինել: Մյուսը ագրարային խմբավորումն էր Միլիթիադեսի գլխավորությամբ: Սրանք պաշտպանական պատերազմի կողմնակիցներն էին: Հաղթեցին Միլթիադեսի համախոհները և Ք.ա. 480թ. սեպտեմբերի 13 Մարաթոնի

դաշտում (Աթենքից 40 կմ հեռու) վճռական ճակատամարտ տեղի ունեցավ 10 հազար Աթենական հետևազորի (հոպիլիտոսներ) և պարսկական մոտ 50 հազ. զորքի միջև: Միլիթիադեսի ռազմական հետևազորի (հոպլիտոսներ) և պարսկական մոտ 50 հազ. զորքի միջև: Միլիթադեսի ռազմական տաղանդի և հույն զինվորների հայրենասիրական ոգու շնորհիվ, պարսիկները ջախջախել պարտություն կրեցին և հեռացաբ Հունաստանից: Կարճ ժամանակ անց Միլիթիադեսը մահացավ Թեմիստոկլեսը ձեռնամուխ եղավ աթենական նավատորմի կառուցմանը, քանի որ կանխատեսում էր նոր պարսկական արշավանք: Մինչև Ք.ա. 480թ. կառուցվեց մոտ 200 ռազմանավ: Պատրաստվում էր նաև Պարսկաստանը: Նոր արքա Քսերքսեսը լաստանավային անցումներ կառուցել տվեց Հելլեսպոնտոսի (նեղուցներ) վրայով, փորել տվեց ջրանցք Ակտե թերակղզում, անասնակեր և սննդամթերք կուտակել տվեց թրակիական պահեստարաններում Ք.ա. 480թ. գարնանը անցավ հարձակման: Պարսկաստանը զորքի հիմնական մասը (մոտ 200 հազ.) Թրակիայից սկսեց շարժվել Կենտրոնական Հունաստան: Մյուս մասը դեպի Ատտիկա էր ընթանում ծովով: Չնայած 300 սպարտացիների սխրանքին, Քսերքսեսը գրավեց և հրկիզել տվեց Աթենքը: Թեմիստոկլեսին հաջողվեց պարսիկներին պարտադրել ծովային ճակատամարտ Սալամին կղզու մոտ Ք.ա. 480թ. սեպտեմբերի 27-ին: Այն ավարտվեց հույների փայլուն հաղթանակով: Ք.ա. 429թ. հունական մացյալ զորքը Պավսանիոսի (Սպարտայի ռեգենտ) գլխավորությամբ, ջախջախիչ հաղթանակ տարավ Պլատեյայի մոտ: Նույն օր, Էգեյան ծովում Միկալե հրվանդանի մոտ հունական նավատորմը պարտության մատնեց պարսկաստանին: Ք.ա. 478թ. դրությամբ պարսիկները վտարվեցին բուն Հունաստանից: Ռազմական գործողությունները տեղափոխվեցին Փոքր Ասիա: Ք.ա. 468թ. հույները մեծ հաղթանակ տարան Էվրիմեդոնտոս գետի մոտ: Ք.ա. 449թ. աթենական նավատորմը Կիպրոսի մոտ պարտության մատնեց պարսիկներին: Կարճ ժամանակ անց, պարսիկները հաշտություն խնդրեցին: Սկսված բանակցություններն ավարտվեցին Ք.ա. 449թ. կնքված Կալլիոսյան հաշտության պայմանագրով, որն արձանագրեց հույն-պարսկական պատերազմի իրավական ավարտը և հույների հաղթանակը: Հույներին հաջողվեց, անհավասար պայքարում պարտության մատնել հզոր հակառակորդի և լիովին ազատագրել իրենց հայրենիքը զավթիչներից: Դա հունական քաղաքակրթության հզորության գագաթնակետն էր:

Թեմա 7. Հին Հունաստանը Ք.ա. V-IV դդ.

Հույն-պարսկական պատերազմից հետո Հունաստանի տարբեր երկրամասերում շարունակվում էր պայքարը արիստոկրատիայի և դեմոկրատիայի կողմնակիցների միջև: Ք.ա. 476 –ական թվականներին արիստոկրատական խմբերին զգալի աջակցություն էր ցուցաբերում սպարտակման զորավար Պավսանիոսը, որն օգնեց Բեովթիայի հետադիմական շրջաններին հաղթանակ տանել դեմոկրատների նկատմամբ: Կարճ ժամանակ անց Պավսանիոսը, որն օգնեց Բեովթիայի հետադիմական շրջաններին հաղթանակ տանել դեմոկրատների նկատմամբ: Կարճ ժամանակ անց Պավսանիոսը իր հայրենիքում փորձեց հեղաշրջում կազմակերպել, սակայն ձախողվեց և սպանվեց: Ք.ա. 464թ. սպարտացիները մեծ դժվարությամբ ճնշեցին հելոտների ապստամբությունը: Հարևան Արգոսում հաղաթանակ տարան դեմոկրատները: Աթենքում մինչև Ք.ա. 471թ. մինչև օստրակիզմի ենթարկվելը քաղաքական գերակայությունը Թեմիստոկլեսինն է, այսինքն դեմոկրատներինը: Սակայն նրա վտարվելուց հետո գերիշխանությունն անցավ արիստոկրատիայի կողմնակիցներին, որոնց ճանաչված առաջնորդը Կիմոնն էր, Միլթիադեսի որդին: Նա ուժեղացավ արեոպագոսի՝ տոհմիկ ավագանու խորհուրդի հետ, որն օժտված էր ժողովրդական ժողովի որոշումներն արգելափակելու իրավունքով: Բացի այդ, միայն արեոպագոսն էր իրավասու քննել պաշտոնեական դիրքի չարաշահումներին առնչվող գործերը: Ք.ա. 464թ. Կիմոնը ենթարկվեց օստրակիզմի: Դրանից օգտվելով էլ դեմոկրատների ղեկավար Էփիալտեսը Ք.ա. 462թ. մի շարք դատական գործեր հարուցեց արիստոկրատների դեմ, իսկ Ք.ա. 461թ. զրկեց արեոպագոսին եկլեսիայի վրա արգելափակում դնելու և պաշտոնական հանցագործությունները քննելու իրավունքներից: Ժողովրդական ատենակալների դատարանը՝ հելեյան, ստացավ օրենսդրության նկատմամբ վերահսկողության իրավունք Էփիալտեսը շուտով սպանվեց, սակայն դեմոկրատները շարունակեցին գերիշխել մինչև Ք.ա. 430թ. մինչև իրենց ամենահայտնի առաջնորդ Պերիկլեսի մահը: Հույն-պարսկական պատերազմից անմիջապես հետո սրվեց միջհունական մրցակցությունը երկու դաշինքների՝ Պելոպոնեսյան և Աթենական (Դելոսյան) միջև հանուն համահունական գերակայության: Սկսվեց հակամարտության և եղբայրասպան բախումների մի ցավոտ շրջան, ինչի արդյունքում թուլանում և հետ էր շպրտվում Հունաստանը: Հասունանում է Պելոպոնեսյան պատերազմը: Դրա նախամուտքը

եղավ Ք.ա. 459-445թթ. զինված կոնֆլիկտը հունական պետությունների միջև: Ճիշտ է Ք.ա. 445թ. դաշինքների միջև 30-տարով կնքվեց զինադադար, բայց այն խախտվեց արդեն Ք.ա. 431թ.: Դադարից օգտվեց Աթենքը, որը Պերիկլեսի կառավարման օրոք (Ք.ա. 444-430թթ.) հզորացավ թե տնտեսապես և թե ռազմականապես: Պերիկլեսը մի շարք դեմոկրատական բարեփոխումներր իրականացրեց: Պետական ընտրովի պաշտոններից դարձրեց վճարովի և դրանով թույլ տվեց, որ թետոսները ևս մասնակցեն կառավարմանը: Վիթխարի շինարարական աշխատանքների շնորհիվ վերացրեց գործազրկությունը: 10 հազ. հողազուրկ ընտանիքների հող հատկացրեց: Կտրուկ բարձրացրեց եկլեսիայի դերն ու նշանակությունը, որը դարձավ պետության իրական կոլեկտիվ ղեկավարը: Հակառակը կտրուկ նվազեց արեոպագոսի և արքոնտոսների դերը: Դելոս կղզուց Աթենք տեղափոխվեց դաշինք գանձարանը, ինչի շնորհիվ հզորացվեց աթենական նավատորմը: Ք.ա. 446թ. Պերիկլեսը փորձ արեց վերացնել միջհունական թշնամանքը և հրավիրվեց համահունական հավաք, սակայն այն չկայացավ Սպարտայի ընդդիմության պատճառով: Պելոպոնեսյան պատերազմը, որն սկսվեց Ք.ա. 431թ. և ավարտվեց Ք.ա. 404թ. մեծ ավերածություններ և կորուստներ պատճառեց Հունաստանին: Պատերազմի սկզբին Ք.ա. 429թ. մահացավ Պերիկլեսը: Նրա հետնորդները չկարողացան հաղթանակներ ապահովել և Ք.ա. 421թ. կնքվեց զինադադար: Ք.ա.415թ. այն կրկին խախտվեց: Վերսկսված ռազմական գործողություններին խառնվեցին պարսիկները, որոնց սրելով հույների միջև թշնամիները Ք.ա. 411թ. Աթենքում հեղաշրջում իրականացրեցին: Սկսվեց քաղաքացիական պատերազմ: Հազարավոր մարդիկ զոհ գնացին խարդավանքներին և հալածանքներն: Թուլացած Աթենքը Ք.ա. 405թ. պարտություն կրելով, ստիպված էր Նավատորմը և ճանաչում էր Սպարտայի գերիշխանությունը,որը տևեց մինչև Ք.ա. 378թ.:Ք.ա. 395-387թթ. տեղի ունեցավ եղվայրասպան նոր պատերազմ՝ կորնթոյանը, որն ավարտվեց պարսիկների դիվանագիտական հաղթանակով և Հունաստանի պառակտմամբ: Ք.ա. 371-362թթ. վրա հասավ Թեբեի գերիշխանության շրջանը: Փոխադարձ թշնամանքը և ատելությունը այն աստիճան թուլացրեցին հույներին, որ Ք.ա. 355թ. դրությամբ ոճ Սպարտան և ոչ էլ Աթենքը ի վիճակի չեղան դիմագրավելու երկրի հյուսիսում հզորացած նոր ուժին՝ Մակեդոնիային, որը մտավ հունական գերակայության համար պայքարի մեջ:

Թեմա 8. Մակեդոնիայի Հզորացումը

Մինչև Ք.ա. V դարը Մակեդոնիան հետամնաց երկիր էր տոհմա-ցեղային հասարակարգի գերակայությամբ: Տնտեսական զարգացումն ապահովում էր անասնապահությունը: Արհեստները և առևտուրը համարյա բացակայում էին: Քաղաքները նույնպես շատ քիչ էին իշխանությունը զուտ խորհրդանշական էր: Ցեղերի և ցեղային միությունների առաջնորդները, որոնք կազմում էին ավագների խորհուրդը (հետերիա) չէին ենթարկվում արքային: Մակեդոնիայի զարգացումն սկսվեց Ք.ա. V դարից, երբ Արքեղայոս թագավորը (Ք.ա. 413-399թթ.) աշխուժացրեց տնտեսական, առևտրական և մշակութային կապերը հունական առավել զարգացած պետությունների հետ: Նրա հրավիրած հույն ճարտարապետները սկսեցին ամրոցներ կառուցել, հույն զորավարներն էին վարժեցնում մակեդոնական քանակը: Առանձնապես լայն թափ ստացավ Մակեդոնիայի վերելքը Փիլիպոս II արքային օրոք (Ք.ա. 359-336թթ.): Նա մի շարք արմատական բարեփոխումներ անցկացրեց նախ ստեղծեց համամակեդոնական զորք աշխարհազորք փոխարեն: Ձևավորեց հանրահայտ ծանրապես մակեդոնական հետևազորը՝ փաղանգը, որն համարվում էր անպարտելի: Ապա մտցրեց ընդհանուր արժույթ՝ ոսկեդարում, որն անվանում էին «փիլիպիկներ»: Նրա օրոք ակտիվորեն սկսեցին շահագործել Մակեդոնիայի ոսկու հանքերը: Ֆինանսապես և ռազմականապես հզորանալով, Մակեդոնիան սկսեց խառնվել միջհունական մրցակցությանը Փիլիպոսը II ներքաշվեց Ք.ա. 356-346թթ. տեղի ունեցած «Սրբազան պատերազմին» և կարողացավ իր ազդեցության տակ գցել Թեսալիան և Փոկիստ: Նրա դեմ ձևավորվեց Միջին հունական պետությունների դաշինք Աթենքի գլխավորությամբ: Ք.ա. 338թ. Քերոնեյի մոտ ճակատամարտում մակեդոնացիները պարտության մատնեցին այդ դաշինքին: Աչքի ընկավ թագաժառանգ Ալեքսանդրը: Ք.ա. 337թ. Կորնթոսում Փիլիպոսը համահունական ժողով հրավիրեց: Նա իրեն հռչակեց հունաստանի «հեգեմոն» և խոստացավ պատերազմը սկսել Պարսկաստանի դեմ: Սակայն Ք.ա. 336թ. Փիլիպոս II սպանվեց: Մակեդոնիայի արքա հռչակվեց Ալեքսանդր III (Ք.ա. 336-323թթ.):

Թեմա 9. Մակեդոնացու արևելյան արշավանքը

Ալեքսանդր Մակեդոնացին Ք.ա. 334թ. սկսեց իր Արևելյան արշավանքը, որի նպատակը Աքեմենյան Պարսկաստանի և նրան հարակից տարածաշրջանների նվաճումներից թուլացած և գահակալական խռովություններով լեցուն Պարսկաստանն էր Դարեհ III գլխավորությամբ: Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Ք.ա. 334թ. մայսիսն Գրանիկոս գետի մոտ: Հաղթանակ տանելով. Ալեքսանդրը սկսեց մեկը մյուսի հետևից գրավել Փոքր Ասիայի քաղաք-պետությունները, որոնց մեծ մասը առանց դիմադրության հանձնվեցին: Ք.ա. 333թ. աշնանը, Փոքր Ասիայի խորքում՝ Դաշտային Կիլիկիայի սահմանին, Իսոս վայրում տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ կրկին հաղթեցին մակեդոնացիները: Դարեհը փախավ՝ իր ընտանիքը գերի թողնելով: Ասորքը և Փյունիկիան դիմադրեց միայն Տյուրոս քաղաքը: Այստեղից Ալեքսանդրը գնաց Եգիպտոս, որտեղ նրան դիմավորեցին որպես ազատարարի: Նա այստեղ նույնիսկ աստվածացվեց և հիմնեց Ալեքսանդրիա հայտնի քաղաքը: Ք.ա. 331թ. Գավգամելայի մոտ, հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ վճռական ճակատամարտ մակեդոնական և պարսկական զորքերի միջև: Ճակատամարտի թեժ պահին Դարեհը փախավ և նրա զորքը խայտառակ պարտություն կրեց: Ալեքսանդրի զորքը գրավեց Բաբելոնը և պարսկական 3 մայրաքաղաքները: Շուտով Դարեհը սպանվեց և Ալեքսանդրը զբաղեցրեց պարսկական գահը: Շարունակելով առաջխաղաղացումը, մեծ դժվարությամբ նվաճվեց Միջին Ասիան՝ Բակտրիան և Սոդդիան: Այստեղ Ալեքսանդրի դեմ հուժկու ապստամբությամբ: Բոլոր նվաճված երկրամասերում Ալեքսանդրը հիմնում էր իր անունը կրող քաղաքներ, որտեղ տեղակայում էր Մակեդոնական կայազորներ:

Այնուհետև, մակեդոնական զորքը հասավ Հնդկաստան: Պարտության մատնելով հնդոսի թագավոր հորոսի զորքին, Մակեդոնիացին այստեղ ևս հիմնեց նիկեա քաղաքը: Շուտով նա հասավ Գանգես գետին և կարող էր այդ տարածաշրջանը ևս նվաճել, սակայն վճռեց այդքանով բավարարել և կարգադրեց հետ վերադառնալ: Նահանջը սկսվեց Ք.ա. 326թ.:Ք.ա. 325թ. Մակեդոնացին արդեն Բաբելոնում էր: Այսպիսով նվաճված էր Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան ձգվող մի վիթխարի տարածք, տասնյակ ժողովուրդներով հանդերձ: Դադար առնելոց հետո Ալեքսանդր Մեծը սկսեց մշակույթների և քաղաքակրթությունների միախառնման քաղաքականություն, որն հայտնի է հելլենիզմ անվամբ: Դա Արևմուտքի և Արևելքի մշակութային, էթնիկ, քաղաքական և տնտեսական

առնչությունների և փոխազդեցության ժամանկաշրջանի սկիզբն էր: Ք.ա. 323թ. Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ, սակայն նրա ստեղծած տերության հիմքի վրա ձևավորվեցին հելլենական պետությունները:

Թեմա 10. Հելլենիստական Հունաստանը: Նվաճումը Հռոմի կողմից

Ալեքսանդր Մեծի մահվանից հետո կատաղի պայքար սկսվեց նրա զորավարների և սատրապների միջև: Ամենաառաջինը միմյանց դեմ դուրս եկավ Եգիպտոսի սատրապ Պտղոմեոսը և Ալեքսանդրի որդու խնամակալ նշանակված Պերդիկան: Հետո այդ պայքարին միացան մյուսները: Ք.ա. 301թ. Փոլոգիայի Իպսոս վայրում տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որի արդյունքում էլ Ալեքսանդրի տերությունը բաժանվեց հետևյալ կերպ՝ Եգիպտոսն անցավ Պտղոմեոսին, Պարսկաստանի զգալի մասը՝ Սելևկին, Մակեդոնիան՝ Անտիգոնոսին: Ձևավորվեցին մի շարք պետություններ, որոնց ընդունված է անվանել հելլենական: Դրանցից ամենազարգացածը և հարուստը Պտղոմեոսյան Եգիպտոսն էր, որը գոյատևեց մինչև Ք.ա. 30թ.: Հելլենական Եգիպտոսի առանձնահատկությունն այն է, որ թագավորն էր հանդիսանում երկրի բոլոր հողերի գերագույն սեփականատերը և ինքն էր դրանք վարձակալության տալիս իրեն հաճելի մարդկանց: Բացի այդ, թագավորին էին պատկանում հանքերը, ճանապարհները, քաղաքները: Արհեստների զգալի մասը և առևտուրը նույնպես թագավորի մենաշնորհն էին: Հարուստ թագավորները ծավալեցին մեծ շինարարական գործունեություն: Կառուցվեց Նեղոս գետը Կարմիր ծովին միացնել ջրանցքը: Եգիպտոսի առևտրական նավատորմը ամենամեծն էր այն ժամանակվա աշխարհում: Հռչակված էր Ալեքսանդրիա քաղաքը, որտեղ կար գիտությունների Ակադեմիա՝ Մուսեյոն և խոշոր գրադարան: Հայտնի է Ալեքսանդրիայի Փարոսը: Զարգացածությամբ և հզորությամբ հաջորդ հելենական պետությունը Սելևկյան տերությունն էր, որը տարածքով ամենամեծն էր: Այս պետությունը գոյատևեց մինչև Ք.ա. 64թ.: Պետության տարածքը վիթխարի էր և բաժանված էր սատրապությունների: Մայրաքաղաքը Անտիոքն էր: Տերությունը հզորության գագաթնակետին հասավ Անտիոքոս Մեծի օրոք (Ք.ա. 223-187թթ.): Սակայն նրա գահակալման ավարտին սկսվեց թուլացումը և տրոհումը: Ք.ա. 64թ. Սելևկյան տերությունը նվաճեց Հռոմի կողմից Եվրոպայում էլ տեղակայված հելենական Մակեդոնիան, որտեղ հաստատվել էր Անտիգոնոսի արքայատոհմը: Մակեդոնիան հզոր էր մինչև Ք.ա. 198թ., երբ Փիլիպոս V-ի օրոք պարտվեց հռոմեացիներին, սկսվեց թուլանալ և Ք.ա. 148թ. նվաճեց Հռոմի կողմից Էգեյան ծովում ձևավորված Հռոդոս կղզի-պետությունը, որը հայտնի էր իր ֆինանսներով: Հռոդոսը պարտքով փող էր տրամադրում նույնիսկ

ամենահզոր միապետներին և վիթխարի եկամուտներ էր ստանում: Բացի այդ, այստեղ էր գտնվում այդ ժամանակվա աշխարհի ամենամեծ ստրկավաճառական շուկան:

Մեկ այլ հեղինակ պետություն էր Փոքր Ասիայում գտնվող Պերգամոնի թագավորությունը: Սա հայտնի էր իր մագաղաթով, գործվածքներով և մեծ առևտրական նավատորմով: Պերգամոն պետությունը գոյատևեց մինչև Ք.ա. 133թ. և նվաճեց Հռոմի կողմից:

Մի շարք հելենական պետություններ առաջացան Միջին Ասիայում Ք.ա. 255թ. ստեղծվեց Հունա-Բակտրիական թագավորությունը Սամարղանդ մայրաքաղաքով: Նրանից հարավ-արևելք ձևավորվեց Հունա-Հնդկական թագավորությունը: Բացի այդ հելենական մի պետություն էլ ձևավորվեց Սև ծովի ափին: Նա հայտնի էր որպես Բոսփորի թագավորություն (կամ Պոնտոսի թագավորություն): Սա գոյատևեց մինչև Ք.ա. 47թ. Բուն Հունաստանում առավել հզորը Անգիգոնոսյան Մակեդոնիան էր մանավանդ Փիլիպոս V օրոք: Վերջինս բախվեց հզորացած Հռոմի հետ: Տեղի ունեցած երեք Մակեդոնական պատերազմների արդյունքում Մակեդոնիան նվաճվեց և կորցրեց իր ազդեցությունը: Ք.ա. 148թ. այն վարածվեց հռոմեական պրովինցիայի: Երբ Ք.ա. 147թ. Հռոմի դեմ ապստամբեց Միջին Հունաստանը, այստեղ ուղարկված հռոմեական զորքը Կվինտոսը Մետելլի գլխավորությամբ դաժանորեն ճնշել այդ ապստամբությունը և Ք.ա. 146թ. Հունաստանը հայտարարեց նվաճված:

Թեմա 11. Հին Հռոմը թագավորական ժամանակաշրջանում

Թագավորական ժամանակաշրջանը Հին Հռոմում ներառում է Ք.ա. 753-509թթ. : Հայտնի են միմյանց հաջորդող 7 թագավորներ: Դրանցից առաջինը քաղաք-պետության հիմնադիր Հռոմուլոսն է, որը գահակալեց Ք.ա. 753-740թթ.: Նրան հաջորդել է Նումա Պոմպիլիոսը, որն իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Նա կարգավորեց օրացույցը, հիմնեց քրմական կոլեգիաներ և ձևավորեց արհեստավորական համքարություններ: Երրորդ արքան՝ Տուլիոս Հոստիլիոսը, գրավեց Ալբա-Լոնգա քաղաքը և նրա բնակիչներին վերաբնակեցրեց Հռոմում: Չորրորդ թագավոր Անկուս Մարցիուսը հայտնի է իր շինարարական գործունեությամբ: Նա կառուցել է առաջին կամուրջը Տիբեռ գետի վրա և Հռոմի նավահանգիստ Օստիան: Հռոմի հաջորդ երեք թագավորները ազգությամբ էտրուսկներ էին: Նախ Ք.ա. 616-578թթ. թագավորել է Տարքվինիոս Ավագը, որը համարվում է Հռոմին իրական քաղաքի տեսք տվողը, քանի որ կառուցել է կենտրոնական հրապարակը՝ Ֆորումը, ապա անցկացրել ջրմուղ և կոյուղի, սալարկել է փողոցները: և Կապիտալիումի տաճարը: Սա սպանվեց իր ստրուկի կողմից, որն էլ դարձավ հաջորդ թագավորը Սերվիոս Տուլիոս անունով (Ք.ա. 578-534թթ.): Սերվիոսը մի շարք բարեփոխումներ անցկացրեց: Նախ, նա վարչական բաժանում իրականացրեց և ձևավորեց նոր միավորներ՝ տրիբուսներ (օկրուգներ), որոնց թիվը 20 էր: Ապա Տուլիոսը Հռոմի բնակչությունը բա-անեց դասերի՝ առանձնացնելով 5 դասեր ըստ ունեցվածքի: Ապա նա ռազմական բարեփոխում կատարեց զորքը բաժանելով, հարյուրյակների՝ ցենտուրիաների, որոնց թիվը հասավ 193-ի: Բացի այդ, Տուլիոսը կառուցեց Հռոմի արտաքին պարիսպներ: Նա ևս սպանվեց և թագավոր դարձավ Տարիքվինիոս Գոռոզը (Ք.ա. 534-509թթ.): Քանի որ սա կառավարում էր արհամարհելով իր քաղաքացիներին և նրանց հալածանքների էր ենթարկում, հռոմեացիները Ք.ա. 510թ. ապստամբեցին և մի տարվա ընթացքում վտարեցին Տարքվինիոսին: Միապետությունը վերացավ, Հռոմը դարձավ հանրապետություն:

Թագավորական Հռոմն ուներ պետական կառավարման համակարգը:

Իշխանական բուրգի ամենավերևում ռազմական առաջնորդի, քրմապետի և գերագույն դատավորի գործառույթներով օժտված թագավորն էր: Օրենսդիր համակարգը ներկայացված էր ավագների խորհուրդով՝ Սենատով, որի անդամները 300 առավել հայտնի և ունևոր տոհմերի նահապետներն էին: Քիչ ներքև եռամակարդակ ժողովրդական

ժողովն էր՝ Կոմիցիան: Կային տրիբուսային, ցենտուրիալ և կուրիալ կոմիցիաներ: Մինչև Տուլիոսի բարեփոխումները հռոմեական հասարակությունն ուներ հետևյալ սոցիալ-էթնիկական կառուցվածքը: Հիմնական բջիջը տոհմն էր: Հաշվվում էին 300 տոհմեր: Դրանք միավորված էին ավելի խոշոր միավորների՝ կուրիաների մեջ, որոնց թիվը 30 էր, իսկ սրանք էլ միավորված էին 3 ցեղերի՝ տրիբուսների մեջ: Տոհմիկ, Հռոմի հիմնադրումից սկսած քաղաքում բնակվողներին՝ լիիրավ հռոմեացիներին անվանում էին պատրիկներ: Միայն նրանք իրավունք ունեին մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին և զբաղեցնել պետական պաշտոններ: Նրանցից քիչ ներքև կլիենտների խավն էր: Սրանք պատրիկների հովանավորության տակ գտնվող նրանց համեմատաբար չունևոր ազգականներն էին: Հասարակության ամենաստորին և իրավազուրկ խավը եկվոր պլեբեյներն էին և նրանցից առավել ծանր վիճակում գտնվող ստրուկները: Թագավորական Հռոմը բևեռացված, սոցիալական պայքարով լեցուն պետություն էր: